ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 215-Ա/2 «30» մարտի 2016

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 891-Ա/Ք ՀՐԱՄԱՆԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2015 թվականի հոկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ գիտաշխատողներին (մինչև 35 տարեկան) հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթը կազմակերպելու, մրցույթի հայտարարության տեքստը և հրավերի փաթեթը հաստատելու և մրցույթի շրջանակներում իրականացվող աշխատանքները համակարգելու նպատակով մասնագիտական փորձագիտական խորհուրդ ձևավորելու մասին» N 891-Ա/Ք հրամանով հաստատված հավելված N 3-ի աղյուսակի 1-ին կետում՝ «Աշոտյան Արմեն Գևորգի» բառերը փոխարինել «Մկրտչյան Լևոն Հովհաննեսի» բառերով, իսկ «բժշկական գիտությունների թեկնածու» բառերը՝ «պատմական գիտությունների թեկնածու» բառերով:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին:

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ